

լիւի Դ. Թագաւորին միջեւ, եւ վերջնոյն աղջիկը Մարիա Թէրէզա ամուսնացաւ Լուի ԺԴ. Փրանսայի Թագաւորին հետ: Պէտք է խորհիլ որ այս հաշտութիւնն է որ առիթ տուեր է Յակոբ Դ.ին վերեւ արտագրուած նամակը գրելու: Ինչո՞ւ գրեթէ երկու տարի վերջ կը գրուի նամակը: Յակոբ Կաթողիկոսը իր նամակին գրատար իբրեւ կը յիշէ Պօղոս Արհի. եւ պիտկոպոս նախընտանու որ նոյնինքն Բիրոմալին էր: Այս վարպետ պապական քարոզիչը Հայաստանէն Հռովմ վերադառնալու առիթէն օգտուեցաւ Յակոբ Կաթողիկոսին գրել տալու այս նամակը, երբ կաթողիկոսը կը յուսար որ Պապը «եւ դուք ցաւակից լինիք աղետիցս մերոց, եւ վշտակցաբար շարժիք առ ազգս մեր»: Զարմանալիօրէն զգոյշ է Յակոբ Դ. որեւէ դաւանական ենթակայութեան խօսք ընելէ այս նամակին մէջ: Ոչ մէկ խօսք Հռովմայ գահին ենթարկուելու: Նամակը կ'աւարտէ շատ քաղաքավար եւ յարգամեծար ոճով եւ օր մըն ալ Պապը տեսնելու անորոշ ահնկալութեամբ:

Յակոբ Կաթողիկոսին այս նամակը անձանօթ կը մնար ինծի իր պարունակութեամբ երբ ՀԱՍԿի Փետրուար 1952 թուին մէջ կը հրատարակէի Յակոբ Դ. Զուգայեցիի մասին նոր նիւթեր: Հոն առաջին անգամ ըլլալով կուտայի բնագրով անձանօթ մնացած վերի նամակին Աղեքսանդր Է. Պապին պատասխանը եւ ի մէջ այլոց կ'եզրակացնէի: «Տրուած պայմաններուն համաձայն դժուար է նրման ամբաստանութեան (լատինամերձութեան) հաւատալ: Յակոբ Զուգայեցի ալ առ այժմ կարելի է ազատ նկատել լատինամերձութեան ընդհանուր ամբաստանութենէն, որ քիչ մը հապճեպ եւ անտեղի կերպով ձգուած է իբր համածածկ (տպագրուած է իրիպակով ՀԱՄԱՐՁԱԿ: Յ. Ք.) վերարկու մը մեր կաթողիկոսներուն գրեթէ ամենամեծ մասին վրայ: Այս եզրակացութեան կը բերէ զիս Աղեքսանդր Է. Պապին գրած այս նորագիւտ նամակը (առ Յակոբ Կաթողիկոս)⁽³⁾, եւ հոս վերատին կուտամ Աղեքսանդր Պա-

պին նամակին իմ Թարգմանութիւնս:

«Աղեքսանդր Է. Պապէն առ յարգելի եղբայր Յակոբ Պատրիարք Ամենայն Հայոց եւ Առաքելական օրհնութիւն: Ապահովապէս խառն զգացումներով է որ քահանայապետական միտքը շարժեցաւ Զեր եղբայրութեան անցեալ տարուան 29 Սեպտեմբեր նամակով, որուն կցուած աղօթքը եւ վկայութիւնը մեր յարգելի եղբայր Նախընտանի Արքեպիսկոպոսին, սուրբ եւ կրօնասէր անձ մը եւ Զեղ եւ Հայ ժողովուրդը շատ սիրող, որ յանձնեց այդ (նամակը): Ծատ մեծ անձկութիւն պատճառեց յիշատակութիւնը շատ վշտալից նեղութեանց որոնք այնքան ատեն է շարաչար կերպով կը հարստահարեն հայ ցեղը, երբեմն ամենածաղկեալը եւ հաւատարիմը Սուրբ Աթոռոյն, եւ մենք աւելի կը վշտանանք քանի որ որեւէ կերպով անոնցմէ ձեզ ազատելու համար, կամ նոյն իսկ դանոնք մեղմելու համար որեւէ միջոց դժուար կ'երեւայ, այնքան որ մենք միայն կարող կ'երեւանք շնորհել Մեր մասնաւորապէս սիրելի գաւակներուն զործնականապէս բարի պաշտօնը կարեկցութեան, ոչ ալ կրնանք որեւէ ուրիշ օգնութիւն տալ, գրեթէ, բացի սրտագին աղօթքներէ առ Ամենաբարձրն ընծայուած հեճուկա ամենախոր զգացումէ ամենարարեացակամ ողորմութեան: Եւ սակայն, եթէ դուն սրտանց կը ցանկաս քու բաժինդ աւելցնել անոնց իրապէս Տիրոջ հաւատադարձեալ սրտերով, բան մը պիտի չմնայ, որ Մենք չյուսանք անկէ որ նուազ հարուստ չէ գթութեան մէջ որքան որ զօրաւոր է զործերով:»

«Սակայն այս կէտը պէտք է բոլորովին ամբացած ըլլայ Զեր մտքին մէջ եւ միայն մտազրուի, որ Դուք պիտի ջանաք կառչիլ յարատեւօրէն այս Սուրբ Առաքելական Գահին, որուն դուք որոշապէս կը վկայէք ճանչցուած ըլլալ ձեզմէ իբր գլուխ եւ Տիրուհի բոլոր եկեղեցիներուն, եւ պէտք չէ որ դուք որեւէ կերպով ասկէ վերջ ինքզինքնուդ թոյլ տաք այս Ժայռին (Հռովմա Աթոռէն) միասնականութենէն հեռացուելու:»

«Աստ Զեր նամակը իրաւամբ Մեզի տուաւ պատճառ ոչ նուազ ուրախութեան

(3) ՀԱՍԿ 1952 էջ 44 ա.: